Ընդհանուր ժողովն արդէն փակուած էր, երբ Էրզրում հասան Իթթիհատի լիազօրներ Բէհաէտտին Շաքիրը և Նաջի բէյը՝ իրենց հետ բերելով մի քանի տասնեակ կովկասցի և պարսիկ-ադրբէջանցի գործակալներ ու մարտիկներ: Նրանց նպատակն էր կազմակերպել հակառուս քարոզչութիւն ու պայքար Կովկասում և Հիւսիսային Պարսկաստանում, այլ եւ պատերազմական նախապատրաստութիւններ տեսնել Արևելեան նահանգներում: Նրանց յանձնարարուած էր նաև բանակցութիւններ վարել Հ. Յ. Դ. ընդհանուր ժողովի հետ Ռուսաստանի դէմ մէկ ճակատ ստեղծելու համար:

Իթթիհատի լիազօրները առաջարկեցին Հ.Յ.Դ. ներկայացուցիչներին, որ դաշնակցականները ռուս-թիւրքական պատերազմի ընթացքում միանան թիւրքերին՝ աշխատելով ռուսների դէմ ապստամբեցնել կովկասահայերին: Նրանք պնդում էին, որ վրացիք ու կովկասեան թիւրքերը արդէն տուել են իրենց համաձայնութիւնը և սկսել են պատրաստուել ապստամբութեան: Եւ, յիրաւի, Իթթիհատական լիազօրների հետ Էրզրում էին եկել և կովկասցի թիւրքեր, որոնք հաւաստիացնում էին, թէ գնում են Կովկաս՝ խռովութիւններ և ապստամբութիւններ առաջ բերելու եւ, պատերազմի պարագային, ռուս բանակը թիկունքից կազմալուծելու նպատակով:

Բէհաէտտին Շաքիրն ու Նաջի բէյը համարում էին վայրկեանը հասած, երբ կովկասեան ժողովուրդները պէտք է ազատուեն ռուսական լծից: Նրանց ասելով՝ Թիւրքիան մտադիր չէ զբաւելու Կովկասը, այլ ձգտում է վերածել թիւրքական հովանաւորութեան տակ գտնուող ինքնավար պետութեան, որ պատուար լինի իր և ռուսների միջև, մասնաւորապէս, հայերին խոստանում էին ստեղծել հայկական ինքնավար մի իշխանութիւն ռուսահայ և նաեւ թիւրքահայ որոշ հողամասերից: Ընդհակառակը, հայերի չմիանալը վրացիներին և կովկասեան թուրքերին կարող է առաջ բերել ծանր հետևանքներ:

Հ. Յ. Դաշնակցութեան ներկայացուցիչները յայտնեցին, որ իրենք կտրականապէս դէմ են Թիւրքիայի պատերազմի խառնուելուն, որովհետեւ իրենք համոզուած են, որ վերջնական յաղթանակը պատկանելու է դաշնակիցներին, իսկ այդ դէպքում պատերազմող կողմ դարձած Թիւրքիան կարող է չարաչար տուժել: Նրանք ապացուցանում էին, որ Թիւրքիայի շահերը պահանջում են պահպանել չէզոքութիւն. չէզոք Թիւրքիան անհամեմատ աւելի շատ կը շահի, քան պատերազմող Թիւրքիան: Պատերազմի մասնակցել՝ նշանակում է երկիրը նետել աննրելի արկածախնդրութեան դիրկը:

Իթթիհատի լիազօրները, սակայն, անյողդողդ էին իրենց առաջարկի վրա: Նրանց համար պատերազմի հարցը որոշուած էր. յանցանք կը լինէր ձեռքից փախցնել յարմար առիթը և մէկ անգամ ընդ միշտ չազատուել ռուսական մղձաւանջից: Գերմանիայի յաղթութիւնը կասկածի առարկայ չէր, իսկ յաղթական Գերմանիա՝ նշանակում էր յաղթական Թիւրքիա: Նրանք համոզում էին հայերին ևս միանալ իրենց և ձեռք-ձեռքի տուած կուել հասարակաց թշնամու դէմ: Բայց Դաշնակցութեան ներկայացուցիչները յայտարարեցին, որ եթէ, այնուամենայնիւ, իրենց կամքի հակառակ, պատերազմը պայթի, Դաշնակցութեան Թիւրքիոյ հատուածի բոլոր անդամները